Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Տավուշի մարզ, Հաղթանակի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Կարծրատիպեր, տարբերություններ, գենդերային Կարծրատիպեր,գենդերազգայուն և գենդեր արձագանքող կրթություն, դասավանդում:

Վերապատրաստող, մենթոր՝ Մայրանուշ Մկրտումյան

Ուսուցիչ՝ Ֆաթիմա Բրոյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ……..3

Մեթոդաբանություն……...4

Հետազոտության ընթացք…….…….5

Եզրակացություն……...……..20

Օգտագործված գրականություն……..……21

Ներածություն

Գենդերային հավասարությանն ուղղված աշխատանքը ընդհանուր ճանաչում գտած սոցիալական նպատակ է հասարակության մեջ:Այն անձիք, ովքեր առնչվում են արդարադատության համակարգի հետ,կսկսեն ավելի շատ վստահել դատական համակարգին, որն արտացոլում է հասարակության բազմակարծությունն ու բազմազանությունը: Պետությունը, որպես դատական մարմինների գործատու, պարտավոր է խթանել գենդերային հավասարությունը դատական համակարգի կառավարման գործում՝ սկսած աշխատանքի ընդունման և մասնագիտական առաջխաղացման աշխատանքային պայմաններից, աշխատաժամերին և աշխատանքի անվտանգությանը վերաբերող հարցերից: Այս համակարգում գենդերային հավասարության նկատառումները ներառելու համար կենսական նշանակություն ունի այն, որ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ու դրանից բխող իրավական ակտերն ապահովեն գենդերազգայուն և գենդերային բաղադրիչը հաշվի առնող իրավական շրջանակ: Այն պահանջում է գենդերային բաղադրիչի ներառումը օրենսդրական գործընթացի բոլոր բաղադրիչներում՝ սկսած նախագծումից, իրականացումից, մշտադիտարկումից և գնահատումից: Գենդերային բաղադրիչի ներառումը նպաստում է ղեկավար պաշտոններում սեռերի առումով հավասարակշռված ներկայացվածության ,անդրադառնում է տղամարդկանց և կանանց միջև գոյություն ունեցող կառուցակարգային անհավասարությանը՝ բարելավելով նրանց հասանելիությունը ռեսուրսներին կամ դրանց նկատմամբ վերահսկողությունը և որոշումների կայացման գործընթացին մասնակցելու նրանց հնարավորությունները:

Գոյություն ունի գենդերային ազդեցության գնահատման (ԳԱԳ) գործիք,որի նպատակն է բացահայտել հասարակության մեջ գենդերային հարաբերությունների վրա տարբեր օրենքների ազդեցությունը և ամրապնդել դատական օրենսգրքում և դրանից բխող իրավական ակտերում գենդերային հավասարությանն ուղղված գործողությունների ուղղությունները:Դատական մարմինները կարող են գենդերային խնդիրների նկատմամբ դառնալ ավելի զգայուն՝ ավելի լավ հասկանալով, թե ինչ կարելի է ձեռնարկել գենդերային հավասարության ապահովման համար:

Ընդհանուր գաղափարն է անդրադառնալ կանանց և տղամարդկանց հավասարության վրա ակնկալվող ազդեցություններին:

Գենդերային ազդեցության գնահատման հիմքում ընկած են կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի նկատմամբ մասնակից պետությունների պարտավորությունները,մասնավորապես կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքն իրենց իրավական համակարգում ներառելու, խտրական բնույթ կրող բոլոր օրենքները վերացնելու պարտավորությունը:

Մեթոդաբանություն

Գենդերային ուղորդման տեսանկյունից արդյունավետ գործողությունները ենթադրում են մի շարք աջակցող կարողությունների խթանման միջոցառումներ: Գենդերային ուղղորդման համար կարողությունների զարգացումը մի գործընթաց է, որը պահանջում է ժամանակ, քաղաքական կամք և մարդկային և այլ ռեսուրսներ: Այն պահանջում է շատ հստակ ռազմավարություն, որն ունի գործողությունների հստակ հաջորդականություն՝ կանանց և տղամարդկանց միջև հավասարության հասնելու ճանապարհին: Կարողությունների ռազմավարությունը պետք է հիմնված լինի հետևյալ անկյունաքարերի վրա.

- Գենդերային հավասարության հասնելու համար գիտելիքներն ու հմտությունները համապատասխան գործածության մեջ դնելու հանձնարարություն:
- Գենդերային ռազմավարություն իրականացնելու ունակություն և պատասխանատվություն:
- Շարունակական կրթության պատրաստակամություն ու գենդերային հավասարության և գենդերային ուղղորդման ոլորտում գիտելիքներն ու հմտությունները խորացնելու ցանկություն:
- Գենդերային հավասարության հիմնախնդիրների շուրջ բազային և պարբերական վերապատրաստումների անցկացում:
- Բարձրակարգ, մասնագիտացված դասընթացների կազմակերպում:
- Գենդերային ուղղորդման վերաբերյալ խորհրդատվություններ:

- Ձեռնարկների, ստուգաթերթերի և այլ օժանդակ նյութերի մշակում:
- Գենդերային հավասարության թեմաներով առցանց դասընթաց, ընդհանուր գենդերային զգայունության, իրազեկվածության բարձրացման, գենդերային ուղղորդման տեխնիկական գիտելիք:

Գենդերային կարծրատիպերը հասարակության մեջ տարածված պատկերացումներ են տարբեր գենդերային, առաջին հերթին՝տղամարդկանց և կանանց ներկայացուցիչների առանձնահատկությունների և վարքագծի մասին: Գենդերային կարծրատիպերը սերտորեն կապված են տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային դերերի հետ և ծառայում են դրանց պահպանման և վերարտադրման համար: Գենդերային կարծրատիպերը նպաստում են գենդերային անհավասարության պահպանմանը:

Բովանդակությունը և արտահայտվածության աստիճանը տարբեր են տարբեր մշակույթներում և պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Օրինակ՝ 19-րդ դարի վերջին թերթերը տպագրելու համար սկսեցին օգտագործել լինոտիպը, կին աշխատավորներին այդ աշխատանքը չէին վստահում՝ պատճառաբանելով, որ կանայք իրենց բնույթով ունակ չեն վարվել նման սարքավորումների հետ: Սակայն ավելի ուշ տպագիր մեքենաների հետ աշխատելու հենց կանայք են զանգվածաբար աշխատանքի ընդունվել: 1970-ականներին լինոտիպին փոխարինելու եկավ համակարգիչը, ինչից կանայք դարձյալ հաջողությամբ կարողացան գլուխ հանել: Այնուհետև կանայք զանգվածաբար փոխարինեցին տղամարդկանց արտադրության մեջ՝ իրենց աշխատանքը համատեղելով տնային գործերի հետ:

Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, գործում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակում: Մարդկանց կատեգորիաների բաժանելը հեշտացնում է իրականության ընկալումը: Գենդերային կարծրատիպերի զոհեր կարող են լինել ինչպես կանայք,այնպես էլ տղամարդիկ: Շատ հաճախ կարծրատիպերի հետևանքով մարդիկ չեն կարող ինքնարտահայտվել, մասնագիտական հաջողությունների հասնել, կայանալ որոշակի ոլորտներում կամ ընտանիքում, փոխարենը դառնում են շրջապատի կարծրացած մտածելակերպի

զոհ: Դրա համար անչափ կարևոր է կարծրատիպերի դեմ պայքարելը և դրանք կոտրելը:

Գենդերային կարծրատիպերի արդյունքում ձևավորվում են գենդերային նորմեր, որոնք կանանց և տղամարդկանց վարքի որոշակի ընդունված կանոններ են: Գենդերային նորմերը պարտադրվում են մարդկանց՝ նրանց կենսաբանական սեռից ելնելով հասարակությունում իշխող պատկերացումներին համապատասխան: Ելնենով այդ պատկերացումներից՝ տղամարդիկ և կանայք կատարում են գենդերային դերեր, որոնք հասարակության կողմից կեսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ են: Գենդերային փոխհարաբերությունների անհամաչափությունները բացատրվում են սեռային տարբերություններով: Դրանից ելնելով «բնական» է դառնում խտրականությունը: Գենդերային խտրականությունը մի գործելակերպ է, երբ տղամարդկանց և կանաց միջև սեռի հատկանիշով պայմանավորված տարբերակում է դրվում և նախապատվություն է տրվում որևէ սեռի, ինչը հանգեցնում է նրանց իրավահավասարության սահմանափակման կամ վերացմանը: Շատ հաճախ գենդերային կարծրատիպերի հետևանքով մարդիկ չեն կարողանում ինքնաարտահայտվել, փոխարենը դառնում են շրջապատի կարծրացած մտածելակերպի զոհ՝ գնալով որոշ զիջողությունների: Գենդերային խտրականությունը կարող է ներառել սեքսիզմը, որը խըտրականություն է մարդկանց նկատմամբ կապված մարդու գենդերային ինքնությունից կամ նրանց սեռային տարբերություններից: Խտրականությունը հատկապես ընդգծվում է աշխատատեղերի անհավասարությամբ:

Գենդերային տարբերություններ-սրանք տարբեր գենդերների ներկայացուցիչների մեջև տարբերություններն են: Ի տարբերություն գենդերային հասկացությանը, գենդեր հասկացությունը սոցիալական կատեգորիա է: 1970 -ականներին գիտնականները հայտնաբերել են չորս պարամետր, որոնցով տղամարդկանց և կանանց միջև փոքր տարբերություններ են նկատվել: Հստակեցրել են այդ տվյալները և պարզել են, որ խոսքի ունակությունների գենդերային տարբերություններ չկան: Մաթեմատիկական ունակությունների, տարածական ընկալման ունակությունների և ագրեսիվ վարքի հայտնաբերվող տարբերությունները

մեծ չեն և կան տվյալներ, որոնք ցույց են տալիս նրանց կախվածությունը գենդերային կարծրատիպերի ազդեցությունից:

Գենդերային տարբերությունները վաղուց արդեն հետաքրքրություն են ներկայացնում տարբեր գիտական ոլորտների գիտնականների համար: Գիտական բանավեճերի հիմնական հարցն այն է, թե գոյություն ունե՞ն արդյոք չվերականգնվող գենդերային տարբերություններ, որոնք կարող են հիմնավորել գոյություն ունեցող գենդերային դերերը և, մասնավորապես տղաների և աղջիկների առանձին ուսուցումը: Տղամարդիկ և կանայք անհատներ են, որոնք ունեն հավասար հնարավորություններ, իրավունքներ և ազատություններ: Սակայն տղամարդկանց և կանանց տարբերությունները պայմանավորված են այնպիսի հակառակ բնութագրիչներով, ինչպիսիք են առաջինների ռացիոնալությունն ու զսպվածությունը և վերջինների էմոցիոնալությունը: Դեռ վաղ տարիքից կանայք սովորում են վարելու համագործակցային զրույցներ, զրույց-շփում, այսինքն՝ սովորում են լինել բարեհամբույր, ապրումակցել և աջակցություն ցուցաբերել: Կանանց համար զրույցը մտերմացման և փոխըմբռնման միջոց է: Դրանով է պայմանավորված, որ կանայք ավելի շատ հարցեր են տալիս և առավել հաճախ են արձագանքում՝ մեկնաբանությունների տեսքով, մինչդեռ տղամարդիկ հակված են վարելու միակողմանի զրույցներ: Նրանց խոսակցությունները կենտրոնանում են ոչ թե զգացմունքների և հարաբերությունների, այլ՝ սեփական գիտելիքների, կարողությունների և տեղեկացվածության ցուցաբերման շուրջ: Նրանք ուշադրություն են գրավում, հարմարավետ են զգում անծանոթ մարդկանց մեծ խմբերում: Նույնը չի կարելի ասել կանանց վերաբերյալ: Վերջիններս առավել լավ են զրույց վարում մտերիմ մարդկանց շրջանակներում և նախապատվությունը տալիս են մասնավոր խոսակցություններին: Կանայք ձգտում են հասնել հարմոնիայի՝ մարդկանց միջև համաձայնության, իսկ տղամարդիկ պարզապես փոխանցում են տեղեկատվություն՝ բոլոր նշանակալի իրադարձությունների վերաբերյալ:
Ցանկացած արտահայտություն, որի հիմքում այն գաղափարն է,թե որոշ անձիք, առավել հաճախ՝ կանայք, ավելի ցածրակարգ են իրենց սեռի պատճառով, համարվում է ՍԵՔՍԻԶՄ: Սեքսիզմը վնասակար է: Այն առաջացնում է անարժանության զգացում, ծանր հետևանքներ ունի կանանց և աղջիկների համար:

Սեքսիզմ գոյություն ունի կյանքի ոլոր բնագավառներում, մասնավորապես.

1. Կին լրագրողների 63 % առերեսվել է խոսքային բռության:

2. Կանայք տղամարդկանց համեմատ մոտ երկու անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում կենցաղային չվճարվող աշխատանքի վրա:

3. Կանանց 80 %-ը նշել է, որ աշխատավայրում առերեսվել են այնպիսի երևույթների, ինչպիսիք են մենսփլեյնինգը:

4. Եվրոպայում լրատվության աղբյուրների և լրատվական ռեպորտաժների 75 % տղամարդիկ են:

կին	տղամարդ
ընդունող	գործող
ենթարկվող	ագրեսիվ
խնամող	ուժեղ
նուրբ	անկախ
էմոցիոնալ	անհամբեր
զգայուն	հաստատակամ
նրբագեղ	ինքնավստահ
հարմարվող	իշխող

ՄԱԿ-ի տերմինաբանական շտեմարանի բնորոշմամբ՝

Սեքսիզմը մի սեռի գերակայության ենթադրություն է մյուսի նկատմամբ և դրանով պայմանավորված խտրականություն ենթադրաբար ստորադաս համարվող սեռի, հատկապես տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ:

Սեքսիզմն իրականացվում է հետևյալ նպատակներով կամ հանգեցնում հետևյալ ազդեցության՝

անձի կամ անձանց խմբի արժանապատվության, իրավունքների ոտնահարում.

անձին կամ անձանց խմբին ֆիզիկական, սեռական, հոգեբանական, սոցիալ-տնտեսական վնասի պատճառում:

վախի, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ ագրեսիվ միջավայրի ձևավորում:

ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերը, հատկապես ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Պեկինի հռչակագիրն ու Գործողությունների ծրագիրը , դիտարկում են սեքսիզմը, խտրականությունը, կանանց նկատմամբ բռնությունը, գենդերային կարծրատիպերը և անհավասարությունը որպես փոխկապակցված երևույթներ, քանի որ սեքսիզմն արդարացնում է մի սեռի ստորադաս և մյուսի գերադաս կարգավիճակը՝ համարելով մեկի (հիմնականում՝ արական սեռի) գերակայությունը բնական, ակնհայտ, սովորական և հաստատուն, հետևաբար՝ արդար:
Սեքսիզմը ներառում է կանանց արժեզրկման տարբեր ձևեր ու տեսակներ, հետևապես, սեքսիզմի դրսևորումների տարբեր դասակարգումներ կան: Օրինակ՝ հաճախ սեքսիզմը բաժանում են երեք տեսակի՝ թշնամական,բարյացակամ և երկակի/ամբիվալենտ:

Թշնամական սեքսիզմը բնութագրվում է կանանց անլիարժեքության մասին բացահայտ պնդումներով, հանգեցնում է ծայրահեղ դրսևորումների՝ կնատյացության ու ատելության խոսքի: **«Բարյացակամ» սեքսիզմն** արտահայտվում է կանանց՝ որպես հոգատար, զգայուն, թույլ և տղամարդկանց պաշտպանության կարիքն ունեցող էակների ներկայացմամբ, ինչը կանանց երբեմն կարող է հաճելի թվալ:

Գործնականում սեքսիզմի այս երկու տեսակները կարող են միաժամանակ կիրառվել տարբեր կանանց նկատմամբ, նման պրակտիկան անվանում են **ամբիվալենտ սեքսիզմ**: Օրինակ՝ երբ դիմելով որևէ կնոջ տղամարդիկ նկատում են, որ նա, ի տարբերություն այլ կանանց՝ տղամարդու նման սուր միտք ունի: Սեքսիզմն առկա է կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության մեջ, ԶԼՄ- ներում, արվեստում, լեզվում, կենցաղում, նույնիսկ վիրտուալ տարածքում: Սեքսիզմը դրսևորվում է երեք մակարդակներում՝ անհատական, ինստիտուցիոնալ (օրինակ՝ ընտանիքում, աշխատանքային կամ կրթական միջավայրում) և կառուցվածքային (օրինակ՝ սոցիալական նորմերի և վարքագծի կանոնների միջոցով): Բոլոր մակարդակներում սեքսիզմի հիմքում ընկած է մի սեռի թերարժևորումը մյուսի նկատմամբ կամ որևէ սեռի նկատմամբ կանխակալ վերաբերմունքը, ինչը շարունակական բնույթ է կրում: **Անհատական մակարդակում** սեքսիզմը դրսևորվում է անհատի

ընկալումներում, խոսքում, գործողություններում, վարքագծում առկա կանխակալ վերաբերմունքով, որը հիմնված է այս կամ այն սեռին վերագրվող հատկանիշների մասին կարծրատիպային պատկերացումների վրա:

Ինստիտուցիոնալ մակարդակում սեքսիզմը արտահայտվում է սոցիալական ինստիտուտներում՝ բացահայտ խտրական կանոններով կամ չգրված նորմերով ներդրված գենդերային անհավասարությամբ: Կարող է արտահայտվել,օրինակ՝ կանանց նկատմամբ սահմանափակող օրենքներով,աշխատավարձերի տարբերությամբ, բարձր պաշտոններում ներկայացվածության տարբերությամբ, խտրական գործելաոճով և այլ ձևերով: **Կառուցվածքային մակարդակում** սեքսիզմը դրսևորվում է տվյալ հասարակությանը բնորոշ սոցիալական նորմերի, կանանց և տղամարդկանց վերագրվող վարքագծի կանոնների միջոցով, որոնք իրենց արտահայտությունն են ստանում կենցաղում, սովորույթներում, ավանդույթներում, ասացվածքներում, սոցիալական հարաբերությունների տարբեր ոլորտներում: Հանրային խոսքում սեքսիզմը մեծապես վերարտադրվում և ուժեղացվում է ինչպես ավանդական լրատվամիջոցների, այնպես էլ՝ սոցիալական ցանցերի միջոցով: Կնոջ անհավասարության հիմնախնդիրը ուղեկցել է մարդկությանն իր ողջ պատմության ընթացքում: Գենդերային կարծրատիպերի և խտրականության արմատացումը կարող է հանգեցնել և նորմալիզացնել այնպիսի արատավոր երևույթ, ինչպիսին է բռնությունը: Բռնությունը հարկադրական տարբեր ձևերի կիրառումն է սպառնալիքի կամ գործողության միջոցով: Կան բռնության հետևյալ տեսակները՝

ա) Ֆիզիկական

բ) Հոգեբանական

գ) Տնտեսական

դ) Սեռական

Գենդեր և սեռ-Կինը և տղամարդը տարբերվում են իրարից և այդ տարբերությունները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Սակայն կան տարբերություններ, որոնք պայմանավորված են կենսաբանական գործոններով և կան տարբերություններ, որոնք կապված են հասարակության մեջ կնոջ և տղամարդու ունեցած դերերի, ակնկալիքների և վարքականոնների հետ: Նպատակ ունենելով առանձնացնել կնոջ և տղամարդու ֆիզիոլոգիական տարբերությունը սոցիալ մշակույթային կերտվածքից՝ առաջ քաշվեցին <<սեռ>> և <<գենդեր>> հասկացությունները: Եթե սեռ հասկացությունը բնութագրում է կանանց և տղամարդկանց կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական և բնության կողմից տրված այլ առանձնահատկությունները,ապա գենդերը մատնանշում է կնոջ և տղամարդու միջև առկա սոցիալական տարբերությունները և հասարակության կողմից նրանց վերագրված դերերի առանձնահատկությունները: Սեռը կենսաբանական կատեգորիա է, սեռի դեպքում մենք խոսում ենք կնոջ և տղամարդու մարմինների միջև կենսաբանական,ֆիզիոլոգիական տարբերությունների մասին: Օրինակ՝ կանանց մոտ՝ հղիություն, ծննդաբերություն, կրծքով կերակրում, տղամարդկանց մոտ՝ բամբ ձայն, ավելի խիտ մազածածկույթ և այլն: Գենդերը սոցիալական կատեգորիա է հասարակության մեջ սոցիալապես ամրագրված, կանանց և տղամարդկանց վերագրվող ընդունելի վարքագիծ: Այսինքն՝ դրանք այն հատկանիշներն են, ընկալումները, ակնկալիքներն ու վարքականոնները, որոնք ոչ թե բնությունն է տվել, կնոջը կամ տղամարդուն,այլ հասարակությունը՝ տվյալ ժամանակահատվածում և տվյալ պատմամշակույթային համատեքստում: Սեռի բնութագրման համար կիրառվող հատկանիշները չեն տարբերվում ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև տարբեր ժամանակաշրջաններում, սակայն գենդերային բնութագրիչները կարող են խիստ տարբերվել հասարակությունից հասարակություն, պատմական ժամանակաշրջանից պատմական ժամանակաշրջան: Օրինակ՝տղամարդուն ասոցացվում են <<ուժեղ>>,<<քաջ>>,<<ընտանիքի հացը վաստակող>>հատկանիշների հետ: Իսկ կանայք նույնացվում են <<քնքուշ>>,<<հնազանդ>>,<<համեստ>>հատկանիշների հետ: Սակայն այս հատկանիշները և վարքագծերը տղամարդուն և կնոջը չեն տրվել ի ծնե, հասարակությունն է դրանք բաժանել՝ անվանելով <<կանացիություն>> և <<տղա-

մարդկայնություն>>: Նման վարքագծերն ու սպասելիքները մարդիկ սովորում, յուրացնում և կիրառում են դեռ մանուկ հասակից՝ ընդօրինակելով իրենց ընտանիքի անդամներին, դաստիարակներին և ուսուցիչներին, գովազդներում առկա կերպարներին և առհասարակ շրջապատին: Կարծրատիպերը մարդկանց ու երևույթների մասին կարծրացած պատկերացումներն են,որոնք արմատավորվում են մարդկանցմտածելակերպում, վերածվում համընդհանուր կարծիքի և հեշտությամբ տարածվում են հասարակության մեջ:

Գենդերային կարծրատիպերը տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կայուն պատկերացումներն են տղամարդկանց և կանանց վերաբերյալ: Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են: Գենդեր-կարծրատիպերը գործում են ինչպես անհատական,այնպես էլ հասարակական մակարդակում: Գոյություն ունի<<կանայք հանուն կանանց>> ծրագիր,որի նպատակն է աջակցել կանանց.

1)Ապահովել որակյալ գենդերային զգայուն մոտեցմամբ խաղաղաշինական բովանդակություն և բարելավել ինստիտուցիոնալ հիշողություններ:

2)Նպաստել գենդերային և կոնֆլիկտների նկատմամբ զգայուն մոտեցմամբ գիտելիքի ստեղծմանն ու տարածմանը փոփոխություն իրականացնողների շրջանակներում:

3)Հզորացնել հակամարտությունից տուժած կանանց տնտեսական և քաղաքական մասնակցությունը <<Կանայք,խաղաղություն և անվտանգություն>> օրակարգի շրջանակներում:
4)Նպաստել դպրոցներում խաղաղաշինության ներդրման և ուսուցիչների կարողությունների զարգացման ջանքերին:

5)Խթանել լրատվամիջոցներում խաղաղության մասին պատմությունների տարածմանն ու խաղաղության կառուցմանը՝ նպաստելով կանանց և երիտասարդների մասնակցությունը խաղաղ գործընթացներին:

Ակնկալվող ազդեցությունը՝ քաղաքականության վերափոխումը գենդերային չեզոքից դեպի զգայունի, կանանց տնտեսական և քաղաքական հզորացում, գենդերային,

խաղաղության և բնապահպանման թեմաների միջառարկայական ըմբռնման առաջխաղացում:

Գենդերային խտրականություն՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը: Գենդերային հավասարությունը ենթադրում է հավասար իրավունքներ, հնարավորություններ և պարտականություններ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: Գենդերային հավասարությունը անձի սեռի հիման վրա խտրականության բացակայությունն է՝ իրավունքների, պարտականությունների և շահի առումով: (Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀօրենք,հոդված 3)

Սոցիալական ինստիտուտների հատկանիշներն ունեն ձևավորված հստակ սոցիալական պրակտիկաներ,որոնք կրկնվում են,գործում են շղթայաբար,կապված են մեկը մյուսի հետ: Ձևավորված են մարդկանց կողմից,գոյատևում են ժամանակի և տարածության մեջ, բայց և անընդհատ փոփոխվում են:

Կրթությունը որպես սոցիալական ինստիտուտ:
Ամենատարածված կարծրատիպերից՝ տղա աշակերտը մաթեմատիկան ավելի լավ բնատուր ունակություններ ունի, քան աղջիկ աշակերտը: Եթե անգամ աղջիկ աշակերտը հավասարապես ներառված է ուսուցման գործընթացի մեջ, նա հավասարապես նույն քաջալերումը չի ստանում:

Ըստ Պեկինի Գործողությունների ծրագրի՝ «Բոլոր կողմերը պետք է իրենց ջանքերն ու ռեսուրսներն ուղղեն կարևորագույն հիմնախնդրային ոլորտների հետ կապված ռազ-մավարական նպատակներին հասնելուն, որոնք *անխուսափելիորեն փոխկապակ-ցված և անհետաձգելի բնույթ* ունեն: Այդ կողմերը պետք է բոլոր հիմնական հիմ-նախնդրային ոլորտներում գործնականորեն մշակեն ու իրականացնեն հաշվետ-վության մեխանիզմներ: Այդ նպատակներով կառավարությունները, միջազգային

հանրությունը և քաղաքացիական հասարակությունը, ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունները և մասնավորսեկտորը, պետք է ռազմավարական միջոցներ ձեռնարկեն հետևյալ կարևորագույն ***12 մտահոգությունները հաղթահարելու համար, որոնց թվում են՝***

1) Կանանց վրա ծանրացած աղքատության բեռի պահպանումն ու մեծացումը

2) Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները կրթության և մասնագիտական պատրաստության ոլորտում և դրանց անհավասար մատչելիությունը

3) Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները առողջության պահպանման և հարակից ոլորտներում և համապատասխանծառայությունների անհավասար մատչելիությունը

4) Բռնությունը կանանց նկատմամբ

5) Զինված և այլ հակամարտությունների հետևանքները կանանց համար, մասնավորապես նրանց, ովքեր ապրում են օտարերկրյա օկուպացիայի պայմաններում

6) Անհավասարությունը տնտեսական կառույցների և քաղաքականության շրջանակներումարտադրական գործունեության բոլոր ձևերում և ռեսուրսների մատչելիության խնդրում

7) Կանանց և տղամարդկանց անհավասարությունը իշխանության բաժանման և բոլոր մակարդակներում որոշումների կայացման մակարդակում

8) Բոլոր մակարդակներում կանանց դրության բարելավման աջակցությանը կոչված մեխանիզմների անկատարությունը

9) Կանանց մարդու իրավունքների նկատմամբ անբավարար հարգանքը և համապատասխանխրախուսման բացակայությունը

10) Կանանց կարծրատիպային կերպարների ստեղծումը հաղորդակցության բոլոր համակարգերում և հատկապես զանգվածային լրատվության միջոցներում

11) Կանանց համար բնական պաշարների անմատչելիության և այդ համակարգերի գործունեությանը նրանց մասնակցության անհավասարությունը

12) Աղջիկների նկատմամբ պահպանվող խտրականությունը և նրանց իրավունքների

Պեկինի Գործողությունների ծրագիրը ոչ միայն պետությունների համար գենդերային

հավասարության ապահովման հիմնարար ուղեցույց է, այլև կանանց շարժման զարգացման համընդգրկուն ռազմավարություն, որը ճանապարհային քարտեզ ծառայեց բազմաթիվ կանանց կազմակերպությունների զարգացման համար:
Այսօր այդ պարտավորությունների կատարման շուրջ սկիզբ առած Պեկին+25 գործընթացի շրջանակում Հայաստանն առավել քան ակտիվ դերակատարում ունի, քանի որ 2020-2021 թթ. նախագահող երկիր է հանդիսանում է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում, որը Պեկինի Գործողությունների ծրագրի իրականացման հարցերում վերահսկող մարմինն է:
Կանանց զորացման սկզբունքները արտացոլում են նաև կառավարությունների և քաղաքացիական հասարակության շահերը և ծառայում են շահագրգիռ կողմերի փոխգործակցությանն աջակցելուն, քանզի գենդերային հավասարության հասնելու համար անհրաժեշտ է բոլոր դերակատարների մասնակցությունը բոլոր մակարդակներում:
Գենդերազգայուն կրթություն-կրթական միջավայրում ոլորտում կամ համակարգում գենդերային նորմերը, դերերը, հարաբերությունները, խնդիրները, առանձնահատկություններն ու տարբերությունները ճանաչելը կամ ճանաչելու ունակությունը,այլ կերպ ասած՝ իրազեկվածությունը վերոնշյալների վերաբերյալ:
Գենդեր-արձագանքող կամ գենդերային պատասխանատվություն զարգացնող կրթություն-կրթական ոլորտում միջավայրում կամ համակարգում համապատասխան քայլերի ,գործողությունների, պրակտիկաների, վարքագծի և հմտությունների վերանայում, ձեռնարկում և կիրառում, որոնք միտված են վերացնելու գենդերային անհավասարություններն ու բացասական կարծրատիպերը և դրանցից բխող գենդերային խտրականությունն ու խնդիրները՝ կրթական միջավայրում գենդերային հավասարություն ապահովելու նպատակով:
Գենդեր արձագանքող կամ գենդերային պատասխանատվություն զարգացնող ստանձ- նող մանկավարժություն- վերաբերում է ուսումնառության այն գործընթացներին,որոնք կարևորում նհաշվի են առնում աղջիկ և տղա սովորողների կրթական կարիքները: Այն ենթադրում է ուսուցչի կողմից գենդերային բաղադրիչի ներառում դասի պլանավորման, դասավանդման, լսարանի կառավարման և գնահատման բոլոր փուլերում: Գենդերազգայուն մանկավարժությունը պետք է

անդրադառնա ուսուցման և ուսումնառության տարբեր եղանակներում գենդերային ասպեկտների ներառման կարգին:

Իգական և արական սեռի սովորողներին տրվում են հավասար սովորություններ և պայմաններ՝ դասարանում և դպրոցում լիդերի պաշտոններ զբաղեցնելու համար: Օրինակ երբ դասարանում որպես ավագ ընտրվում է մի սեռի, ապա նրան փոխարինողը ընտրվում է հակառակ սեռի՝այսպիսով պահպանելով գենդերային բալանսը և ոգևորելով և հնարավորություն ընձեռելով երկու սեռին էլ հավասարապես ընդգրկվելու որոշում կայացնելու պաշտոնում: ՈՒսուցիչը կարևորում, ձևավորում և ապահովում է գենդերազգայուն հաղորդակցություն թե՛ իր սովորողների, թե՛ վերջիններիս ծնողների հետ: Գենդերային հարցերի ու խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով դասղեկի ժամին սովորողի և նրանց ծնողների հետ թեմատիկ քննարկումներ են կազմակերպում:

Գենդերազգայուն կրթությունը խրախուսվում է դպրոցի ղեկավար մարմինների կողմից:

Գենդերային քաղաքականություն-Հանրակրթության պետական չափորոշչում պետք է ներառվի գենդերային բաղադրիչը, որպեսզի կրթությունը դառնա գենդերազգայուն և գենդեր արձագանքող, քանի որ այն կնպաստի կարողունակությունների զարգացմանը:

Գենդերային ուղղորդում

(Gender Mainstreaming)

Գենդերային ուղղորդումը կամ գենդերային մոտեցման ուղղորդումը կանանց և տղամարդկանց առնչվող ցանկացած ձեռնարկված գործողության գնահատման գործընթացն է, ներառյալ՝ օրենսդրությունը, քաղաքականությունը կամ ծրագրերը բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում:

Գենդերային ուղղորդումը մի ռազմավարություն է, որի շնորհիվ և՛ կանանց, և՛տղամարդկանց առջև ծառացած խնդիրները, ինչպես նաև նրանց կուտակած փորձը պետք է դառնան անքակտելի չափանիշ քաղաքական, տնտեսական և սոցիալական բոլոր ոլորտների քաղաքականության և ծրագրերի մշակման, ինչպես նաև իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացում:

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ գենդերային ուղղորդումը

Մի կողմից, որպեսզի կանայք և տղամարդիկ հավասար չափով օգտվեն զարգացման ծրագրերի արդյունքներից, մյուս կողմից՝ որպեսզի անհավասարությունը բացառվի:

2.Ինչպե՞ս իրականացնել գենդերային ուղղորդումը

Փաստաթղթերի, քաղաքականության և ծրագրերի գենդերային ուղղորդումը անհրաժեշտ էիրականացնել՝ առաջնորդվելով գենդերային հավասարությանը վերաբերող միջազգային և ազգային փաստաթղթերով:

Դրանց թվում են՝

➢Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը .

➢ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW)32 .

➢Հազարամյակի հռչակագիրը և հազարամյակի զարգացման նպատակները (2000) 33 .

➢Գենդերային քաղաքականության հայեցակարգը

➢Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2019-2023 թթ. ռազմավարական ծրագիրը.

3.Ի՞նչ հնարավորություններ է ընձեռում գենդերային ուղղորդումը

Գենդերային ուղղորդումը հնարավորություն է տալիս՝

➢օգտագործել ռեսուրսներն այնպես, որ թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ հավասարապես օգտվեն արդյունքներից.

➢հայթայթել և օգտագործել բոլոր հնարավորությունները ծրագրերում գենդերային հավասարության սկզբունքը պահպանելու համար.

➢հանդես գալ այնպիսի նախաձեռնություններով, որոնք կօգնեն հաղթահարելու

անհավասարությունը և կապահովեն կանանց հավասար մասնակցությունը որոշումների կայացման ու քաղաքականության ձևավորման գործընթացներում.

➢հանդես գալ այնպիսի նախաձեռնություններով, որոնք կօգնեն հաղթահարելու կարծրատիպային մոտեցումները, որոնք բերում են ոչ արդարացի իրավիճակների ստեղծմանը.

➢ոչ միայն պայքարել անհավասարության դեմ, այլև հայտնաբերել այն ծնող պատճառները:

Գենդերային ուղղորդման սկզբունքները

Գենդերային ուղղորդման գործընթացը ենթադրում է՝

➢**ինտեգրել** գենդերային հավասարության սկզբունքներն ու իրավունքահենք մոտեցումը, ինչպես պահանջվում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում և հարցին առնչվող այլ միջազգային և ազգային փաստաթղթերում.

➢**ցուցաբերել** գենդերային զգայուն մոտեցում պլանավորման և որոշումների կայացման շրջանակների և գործընթացների մեջ՝ կանանց և հավասարության հարցերին անդրադառնալու նպատակով հնարավորություն ընձեռելով ներգրավվել մասնագիտական (գենդերային իրազեկված) երկխոսության մեջ համայնքային և ազգային մակարդակներում.

➢**աջակցել** հասարակության անդամների իրազեկության բարձրացմանը գենդերային արդարության ու հավասարության վերաբերյալ, ***ներառյալ պլանավորման և բյուջետավարման գործընթացները***՝ զարգացնելով հմտություններն ու տարածելով մեթոդներ ու գործիքներ, որոնք լրացնում են առկա փորձն ու պրակտիկան:

Գենդերազգայուն բյուջետավարում

(Gender Responsive Budgeting)

«Գենդերազգայուն բյուջե» եզրույթը նշանակում է բյուջե, որը հավասարապես և արդարացիորեն հաշվի է առնում կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների շահերը և կարիքները:

Բյուջետային գործընթացներում գենդերային մոտեցումը որոշակի ժամանակահատվածի, հասարակարգի, կառավարման տարբեր համակարգերում կանանց և տղա-

մարդկանց փոխհարաբերությունների առանձնահատկությունների դիտարկումն է, որով ամրագրվում է, որ տղամարդիկ և կանայք պետք է լինեն գործընթացի լիարժեք մասնակիցներ և շահառուներ: Գենդերազգայուն բյուջետավարումը (ԳԶԲ) ծախսերի վերաբաշխման հնարավորություն է՝ ի նպաստ գենդերային հավասարության ապահովմանը: Այս գործընթացը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց տարբեր կարիքներն ու առաջնահերթությունները, խնդիրներն ու պահանջները, ԳԶԲ-ն սկսվում է տղամարդկանց և կանանց վրա բյուջեի ազդեցության վերլուծությամբ, որի

Գենդերազգայուն բյուջետավարումը նշանակում է բյուջեի գենդերային գնահատում՝ ներառելով գենդերային հեռանկարը բյուջետային գործընթացի բոլոր մակարդակներում և եկամուտների ու ծախսերի վերադասավորում գենդերային ավասարության խթանման նպատակով: (Եվրոպայի խորհուրդ, 2009)

Գենդերազգայուն բյուջետավարումը սոցիալական վերափոխման և անհավասարության վերացման հզոր գործիք է: Այն ունի փուլեր. նախ՝ բյուջեի գենդերային տարբերակված ազդեցությունների վերլուծություն, այնուհետև՝ բյուջետային որոշումների կայացում ու կանանց և տղամարդկանց տարբերակվող պահանջներին համապատասխան առաջնահերթությունների որոշում և վերջում՝ իրականացում և ազդեցության մշտադիտարկում:

Գենդերազգայուն բյուջետավարումը օգնում է կառավարություններին՝

Բյուջեն դարձնել ավելի ուժեղ գործիք գենդերային հավասարության վերաբերյալ քաղաքականության իրականացման և հասարակության մեջ խտրականության վերացման համար, բարձրացնել պլանավորողների և քաղաքականություն մշակողների իրազեկվածությունն ու գիտակցությունը այն մասին, թե ինչպես են բյուջեն և քաղաքականությունները տարբերակված ձևով ազդում կանանց և տղամարդկանց վրա, արդյունավետ օգտագործել պետական ռեսուրսները. գենդերային անհավա- սարությունը կարող է հանգեցնել տնտեսական և մարդկային զարգացման մեծ կորուստների, ապահովել թափանցիկությունը՝ բյուջեն բոլորի համար ավելի հասկանալի դարձնելով և խրախուսելով հասարակության ավելի լայն մասնակցությունը:

Եզրակացություն

Այսպիսով գենդերը,գենդերային կարծրատիպերը,գենդերային տարբերությունները հա - սարակության մեջ տարածված պատկերացումներ են,կապված են տվյալ հասարակու- թյան մեջ գոյություն ունեցող գենդերային դերերի հետ,ծառայում են դրանց պահպան- ման ու վերարտադրման համար:Հայաստանում նույնպես տարածված են նշված հասկա- ցությունները և այնքան խորքից են գալիս,որ կարելի է հանդիպել ամենուրեք:Այսօր մի- ջազգային բոլոր կառույցները իրականացնում են տարբեր ծրագրեր,դասընթացներ՝ նը- պատակ ունենալով ստեղծել իրավահավասար հասարակություն թե՛ կանանց,թե տղա- մարդկանց համար:Ինչպես ամբողջ աշխարհում,այնպես էլ Հայաստանում գենդերային անհավասարությունը բոլոր դրսևորումներով կա՝ աշխատաշուկայում,բռնություն ընտա- նիքում և ընտանիքից դուրս:Գենդերային կրթությունը դիտարկելով որպես ընտանեկան բռնությունների կանխարգելման հիմնասյուն,պենք է կրի ֆորմալ բնույթ և հանրակրթա- կան դպրոցների ուսումնական պլանում ներդրվեն գենդերային հավասարությանն ա- ռընչվող թեմաներ:Այս ամենը դիտվում է հասարակության մեջ առկա գլոբալ խնդիր և մի- ջոցներ պետք է ձեռնարկել այն նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով:

Օգտագործված գրականություն

1) Լիպպման-Հասարակության կարծիքը-2004 թ.

2)Սուդակով-Դինամիկական կարծրատիպեր-2002թ.

3)Ռյաբովա-Կարծրատիպեր և գենդերային հետապնդում-2003թ.

ՀՀ օրենքներ և իրավանորմատիվային փաստաթղթեր

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորու-թյունների ապահովման մասին» ՀՀ օրենք, 2013:

Գենդերային քաղաքականության հայեցակարգ, 2010:

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԱԺ, 2017: